Տի սիրես, սիրէ՛ սրտով, կշտացեր եմ սուտ խաբելով:

****

Քանի՛ դուն հուտա հուտա, իմ հուսայ սիրտըս կու դողայ:
Եա ելի եկու հուսա, եա ելի տեղկացդ ու գընա՛.
Հիմա կու մեռնիմ հուսա, արունտէր կ՚անեմ քեզ հուտա:
Երբ որ իս որ չես ուզեր, ա՛ռ սուր մի մորթէ՛ իս հուսա:
Արունս ի խատէի մի ա՛ռ, տեղ մի դի՛ր թող երթայ մընայ,
Երբոր սէրս որ միտքդ իյնի, դի՛ր բերնիդ պըտիկ մի ըմպէ՛.
Սէրը սիրողին վայլէ, ան գինին անուշ խըմողին:

****

Հայվան որ ծառին ճըղին, սիրտ ն է սեւ, երեսն է դեղին.
Երնե՛կ խնծորին ծառին, իր ծառին եւ իր տերեւին:
Գիտեմ դուն զօր դեղ ունիս, բե՛ր ու տո՛ւր որ ես լաւանամ:
Թէ տաս՝ երթամ լաւանամ, թէ չիտաս՝ երթամ մեռանիմ.
Թէ չիտաս երթամ մեռանիմ, քեզ ալ կանչեմ մարդըսպան:
– Խնծորս է՝ ծառ ու ճըղեր՝ խէկ, անուշ, դեռ չէ հասեր:

****

Աս գիշեր մինչի լուսացաւ, ես երկու խանղալ մանեցի.
Իմ եարն ալ որ միտքս ինկաւ, թէզ մ՚ելայ ջահրաս կործեցի,
Գացի իմ եարին դուռը, «Ձիւն եկեր, ոտուիս կու մըսի»:
Իմ եարն ալ ի դուրս եկաւ, թէ՝ «Բարի՛ եկիր, իմ հոգի՛,
Եկո՛ւ գիրկոծոց անենք, որ ոտքուդ մաղկատն անցընի»:

****

Աստղիկ մ՚երկնուցմէն ի վար կու սիրէ ձկնակ մի ծովու.
Ո՛չ աստղիկը վար գալու, ո՛չ ձկնակն ի վեր գընալու.
Աստղիկ, սիրէ՛ ամպն ելի (?), նաւն ու ծովն է ալի՛:
Ծովը դարէ դար տարաւ, դիհասաւ սրտին մուրատին:

****

Կարմիր ու ճերմակ հարսնուկ, չորանաս թէ իս մոռանաս,
Չորնաս փուտ ուռի դառնաս, թէ ծոցի՛կըդ մարդու բանաս.
Ծոցիկդ որ մարդու բանաս, տ՚անիծեմ որ քար տի դառնաս: